

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՍԱՆՍԱՆ

Երկու քիւր մէկ ծաւրով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տօլար

Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Ո Ւ Կ

Ծանոցման սողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶԻՔԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

ՀԱՍԻ

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

КРАВУНИ

ВАРНА

Գրութիւնք եւ չեւ
տրութիւր

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՔԻՐՈՍԵՐԻ

—*—

Պօլսէն Ապրիլ 1 (մարտ 17)
Թուակիր հեռագրով մը թան ին
հետեւալը հաղորդուած է .

«Անգլիան ապահովութիւնը ըս-
տացաւ թէ թապահաւարութեան
գործը շարունակ կարգադրուի մինչեւ
երկուշաբթի : Սուլթանը շատ մը
տատանջ ըլլալով, որ Պէտրոսեան
բազմամեակ քիւրտ ընտանիքի
աքսորութենէն Քիւրտիստանի մէջ
հետեւանքներ ծագին, կուգէր ըզ-
գուշանալ ամէն կնճռոտութիւն-
ներէ, որոնք կրնան առաջ գալ
Անգլիոյ մէկ բռնի գործողութե-
նէն եթէ խեղդոյն լուծուի
յապաղէր : Ուստի հրաման տու-
աւ նախարարաց խորհուրդին
անյապաղ կարգադրել սա Ագա-
պայի վէճը :»

«Կ. Պօլսէն Մարտ 21 Թուակա-
նաւ սա հետեւեալ հեռագիրը առ-
նուեցաւ .

«Բ. Դուռը հասնող լուրերուն
նայելով, Կարնայ մօտ Տէրսիմի
լեռնային տեղերու Քիւրտերուն
մէջ ապստամբութեան նշաններ
կը տեսնուին եղբւր եւ անդին աս-
դին Հայոց վրայ յարձակելու ըս-
կներ են : Սակայն դիւանագի-
տական չըջանակներու մէջ հա-
ւատք չ'ընծայուիր որ Քիւրտե-
րու աքսորութեան լուրերը այդ
աստիճան չուտ հասած ըլլան այն-
չափ հեռու տեղեր :»

Մեր ընթերցողներուն յայտնի
է թէ Պօլսէն աքսորուող քիւր-
տերը Պոլսոյ քաղաքապետ Րիթ-
վան փաշան սպաննել տուողներն
են, որոնք տխրահռչակ Պէտրոսեան
պէյի որդիները ըլլալով, մին՝
Ապտիւլ-Քալաթ պէյ, պալատին
սենեկապետն էր, միւսը՝ Ալի Շա-
միլ փաշա՝ Սկիւտարի հրամանա-
տարն էր : Ասոնց ոճրին բուն
թելադրիչը եւ միջոցներ հայ-
թալթողը ըլլալը հաստատուե-
ցաւ բազմաթիւ վկաներով եւ
մարդասպաններուն խոստովանու-
թիւններովը :

Այս դէպքով անգամ մըն ալ
հաստատուեցաւ թէ Քիւրտ պէ-

յիրը որոնք Սուլթան Համիտէն
բարձր պաշտօններու կը կոչուին,
կը վարձատրուին ու կը թելադ-
րուին, ո՞ր աստիճան պագալի ոճ-
րագործներ են, որոնք կը համար-
ձակին մայրաքաղաքին մէջ իսկ
Բատիշահին սիրելի փաշաները ըս-
պաննել տալու իրենց ցեղակից-
ներուն եւ զանոնք պաշտպանելու
ոստիկանութեան դէմ :

Ալ ինչեր չեն ըներ կամ ընել
տար անոնք Հայաստանի մէջ
խեղճ Հայերուն դէմ :

Սուլթանը գոնէ այս դէպքէն
փոխանակ քիչ մը կարմրելու,
տակաւին լրբութիւնը կունենայ
զայն իր հայաշինջ ծրագրերին
ծառայեցնել ջանալու, պետու-
թիւնները խափել ուղիով, թէ
քանի մը ոճրագործ Քիւրտերու
աքսորութեան իսկ պատճառ կըլլայ
Քիւրտիստանի (!) Քիւրտերուն ա-
պստամբութեանը եւ Հայոց վրայ
յարձակումներ գործելուն :

Վերի առաջին հեռագիրը կա-
պացուցանէ թէ Սուլթանը Պէ-
տրոսեան պէյի այդ երկու որդի-
ները աքսորելու հրաման տուած
օրը իսկ հրահանգած է Կարնայ
եւ Քարբեղի կուսակալութիւն-
ները, որ քրդական շարժում մը
առաջ բերեն ի վրաս Հայերուն :

Երկրորդ հեռագիրը թէ Դու-
ռը լուրեր ստացեր է Քիւրտերու
ապստամբութեան մասին, իբր
հետեւեալ Պոլսոյ ոճրագործ
Քիւրտերուն աքսորման, իր հեր-
քումը իր հետը կը բերէ, աւելցը-
նելով թէ դիւանագիտական շրջա-
նակներուն մէջ չեն հաւատար
աքսորման լուրին այդչափ չուտ
հասնելուն եւ այդ պատճառաւ
Քիւրտերու ապստամբութեան մասին
Սա կը նշանակէ թէ Պոլսոյ դեռ-
պանները այն համոզման մէջ են
թէ Քիւրտերու նոր շարժումը եւ
տեղ տեղ Հայոց վրայ յարձակու-
մը եթէ ճիշդ է, այդ երկուքէն
տրուած հրահանգի մը հետեւեալ
կրնայ ըլլալ, եւ ոչ թէ աքսորման
լուրին, որ քանի մը օրուան մէջ
չը կրնար Տէրսիմի լեռները
հասած եւ անմիջապէս Քիւր-
տերուն ապստամբութիւն կազ-
մակերպելու առիթ տուած

ըլլալ : Հետեւապէս վերի առա-
ջին հեռագիրը՝ որ երկուքէն
առնուած է, պարզապէս խոստ-
վանութիւնն է Սուլթանէն թե-
լադրուած նոր դաւի մը թէ՝
Հայեր ջարդել տալու նպատա-
կաւ եւ թէ եւրոպային հասկցելու
համար որ քանի մը Քիւրտերու
պատժուիլ իսկ ապստամբութիւն
առաջ կը բերէ, ուստի զգուշանալ
պէտք է Հայաստանի խաւով ցե-
ղերը զոգոհացնող խոստութիւն-
ներէ :

Բայց եւրոպացիք կը կըլլեն
Սուլթանին այս խալտառակ հրո-
պիտութիւնները : Կը հարցնենք,
կը կըլլեն :

—Կը պատասխանուի թէ իրենց
օրուան շահերու պահանջը գիտէ :

ՍԱԿԵԴՈՆԻԱ

ԿԱՐՄԻՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ ՄԸ

«Գուրիէ սը Սօֆիա» թերթը հրա-
տարակեց 1904 եւ 1905 տարիներու մէջ
Պուլկարներու վրայ ի գործ դրուած
ոճիրներուն ամբողջ ցուցակը : 1039
պուլկար զոհեր կուսնան մակեդոնա-
կան մարտիրոսութեան երկար ցանկին
վրայ : Այն ցուցակը հակակռի են-
թարկելու միջոցները շատ պարզ են .
գերեզմաններ, ծնողներու ցարդ տեղ
սուղը, վիրջապէս հիւպատոսական պաշ-
տօնատանց եւ ոստիկանապետ զօրավար
Տըճօրիսի գրասենեակներուն յանձնու-
ած տեղեկագիրներ : Նոր զոհերու թի-
ւը կը հաստատէ թէ Սակեդոնիոյ մէջ
Եւրոպայի առաջին միջամտութիւնէն ըս-
պասուած արդիւնքը ոչինչ եղաւ : Պա-
րագի կանցնի եւրոպացի սպաներու
յանձնուած ոստիկանութեան պայտօնը,
անոնք անկարող կը մնան ոճիրներ եւ
կողոպտումներ գործող Յոյները եւ
Թուրքերը ձեռքաւորելու :

Յոյները չեն կրնար պահել թէ հա-
րիւրաւոր Պուլկարներ սպաննուած են
յոյն հրոսախուժներէ : Յոյները կը
խոստովանին եւ կարգադրանքներ անդ-
հատաբար խուճերուն առաքումը Մա-
նաստրը եւ Սէլանիկ նահանգներուն
մէջ, առաքումը, կրնան անոնք, անհրա-
ժեշտ է պահպանուին համար իրենց
բազմաթիւ ազգակիցներուն որոնք վը-
տանգի տակ էին իրենց կրօնական եւ
հէլլենական շահերուն տեսակետով
նէվօլանէի եւ Չէլէնիլիէի մէջ խաղա-
ղօրէն հարսանեաց հանգէսի համար հա-

ւաքուած կամ հանդարտօրէն շուկա-
էն վերադարձող Պուլկարները յան-
կարծ յարձակում կրելով ջարդուեցան
այն աստիճան վարդապետեամբ որ
պուլկար զօմի թաճիներուն ատեն մը
ըսածները գերազանցեց : Ասդին Պուլ-
կար քահանաներ սպաննուեցան եկե-
ղեցիին մէջ երբ արարողութիւն կը
կատարէին, անդին պարկեշտ ուսու-
ցիչներ պաշարուեցան եւ սպաննուե-
ցան նոյն իսկ վարժարանին մէջ, ինչ-
պէս գայլեր իրենց որջին մէջ :

1905 Մայիս 13ին պաննուները Պուլ-
կարներ, 186 հոգիներ յոյն հրոսախուժ-
ներէ մը նետուեցան Պիթրիցա գետին
մէջ ուր խեղդուեցան : Բայց աւելի ա-
ռաջ Գասթօրիայի կառավարութիւնը
Սալիչաի եւ Բօսանիի միջեւ քարանձա-
ւէ մը գտաւ 65 կազմալուծուած զինակ-
ներ, որոնցմէ միայն 10 հատը ճանչ-
ցուեցան : Կատարուած քննութեանց
համեմատ Մանաստրըր նահանգին
ժողովուրդը սարսափեցնող յոյն հրոսա-
խուժները հեղինակն են եղած այդ հա-
ւաքական ոճրագործութեանց : Միեւ-
նոյն վայրկեանին տեղի ունեցան կո-
տորածները Ջակօթիչանի անուն էք-
սարքական զիւղին, որ ամեն կողմէն
շրջապատուեցաւ 300 հոգիներ յոյն
խուճի մը եւ քանդուեցաւ մեծաւ մա-
սամբ : Հոն ամենափայլունի կոտորածը
տեղի ունեցաւ : Աւստի—Հունգարից
եւ Ռուսիոյ հիւպատոսները՝ որ տեղ-
ւոյն վրայ գացին, տեսան փորներին
ճեղքուած եւ աչքերնին նսնուած մա-
նուկներ : Միւսերոյդէ նետուած ուսու-
ներով ամբողջովին ջնջուած ընտանիքի
մը ամենափոքր զաւակը սուրէ անցու-
եցաւ :

Պէտք է ըսել թէ թուրք զօրքերը
հազուադէպօրէն ետ կը կենային մաս-
նակեղէ ջարդերուն եւ հրդեհումնե-
րուն զօրս յոյն խուճերը կը գոր-
ծէին քաղաքներու Պատրիարքարա-
նէն : Շատ մը առիթներով տեսնուե-
ցան «միւսիւր»ներու եւ «պաշպո-
զուգ»ներու յարձակիլը խեղճ զոհերու
վրայ, անասուններ քշելը, զոյքեր հա-
գուստներ կողոպտելը, կիներ եւ պղ-
ջիկներ առեւանգելը որոնցմէ Թուր-
քերը չեն յագեցար : Այլպանական ա-
ւազակները եւս կը տեսնուին Պուլ-
կարներ սպաննելու համար . այս կը
պատահի մանաւանդ Սքիւպի նահան-
գին մէջ :

Ինչ որ նախանձողութիւնը կը ծան-
րացնէ Յոյներու եւ Պուլկարներու մի-
ջեւ, այն է Սերպիացի խուճերուն
Պուլկարներու դէմ միջամտութիւնը :
Ասոնք եւ իրենց խեղճը կորստեան
մատնուած են Հին Սերպիոյ մէջ : Մաս-
նաւոր թղթակցութեան մը համաձայն,
ես իրաւունք ունիմ հաւատալու թէ

Սերպերուն եւ Յոյներուն մէջ տեսակ մը համաձայնութիւն կայ, այնպէս որ առաջինները կը հաւակնին Գոսովայի նահանգին մէջ կրօնական եւ կըրթական հաստատութեանց տէր դառնալու ինքնիշխան Սերպ յայտարարել մերժելուն պատճառաւ տասնհազարով Պուլկարներ մահուան մատնուեցան։ Սերպի հիւսիսային արեւմտեան կողմը այս կերպով ապահովուած է Սերպութիւնը։ Բոլոր մանուկ, Բոճեւիճո եւ Բալանքա գաղաներու շատ մը գիւղերուն մէջ, նոյն իսկ Սերպի չորջրը, Սերպերու բրօքականաւոր յաջողակէս կը տարածուի։ Աւստրիական հիւպատոս (Մ. Բառա), որ հրամաններուն հսկելու ամեն կերպով խափանելու համար այդ բրօքականները, կ'օգտուի իրեն վրաւելու համակրանքը Պուլկարներուն որոնք զանի «ազատարար» համարել սկսած են։ Ահա թէ ինչպէս պառակտուի կը մանէ երկու ժողովուրդներուն մէջ որոնք ամենուրեք միացած պէտք էին մնալ։ Այս պառակտուի ալժամ Մակեդոնիոյ մէջ բոլոր անցած դարձածներուն ամենատխուր եւ ամենալրդու վեցուցիչն է։

(Գուրիէ Էփօթէէն) Ս. Մ. Ս.

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ-ԹՐԻԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հայ—թրքական, համաժողովի պահանջներուն եւ եզրակացութիւններուն առթիւ՝ Փոխարքային տուած հետեւեալ որոշումները կարգացուցան վերջին նիստին, Նորին Բարձրութեան արտասանած ճառէն յետոյ.

Ո Ր Ո Շ Ո Ի Մ

Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքայի կովկասում։

«ԻՐԱԽՈՒՆԻ» ԹԵՐԹՈՆԸ

ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ

(Շար. նախորդ թիւէն)

ՀԱՍՈՒՍԻ Պ.

Բարեբաղդաբար նա մեռաւ անցած ուրբաթ։ Ասում եմ բարեբաղդաբար եւ կրկնում եմ որ իմ եղբոր մահը իրան մի մեծ շնորհ էր։ Մի հաշմանդամ առանց սրտիգնիւնի, շանթահար եղած եւ մեռած հոգեւով։ Նա սոսկալի էր եւ խղճալի իրա անմիտ մտքի յափշտակութեամբ։ Սկսած այն գիւղերուանից նա շարունակեց գրել ամբողջ երկու ամիս, առանց սեղանի առջեւից հեռանալ կամենալու։ Մերժում էր ամեն ուտելիք։ Արտասուում եւ կշտամբում էր երբ փորձում էինք նրան ման ածել։ Նա զարմանալի աւագութեամբ շարժում էր իր ցամաք գրիչը, թերթեր ստէպ ստէպ մի կողմ նետում եւ շարունակում գրել ու գրել։ Նա քուն չուներ, երկու անգամ միայն յաջողեցինք, զօրաւոր թմբեղեցիներ շնորհիւ նրան անկողին դնել, կարճ ժամանակով, սակայն ի վերջոյ նրանք էլ դառան անգոր նրա յիմար յափշտակութեան առջեւ։ Նրա փափաքի համաձայն ամ,

Պատգամաւորների յայտնած ցանկութիւններից զատելով ամենագործնական նուրբ զարգացումը, որոնք համապատասխանում են այս սուր ժամանակին, փոխարքան կարելի համարեց. 1) հաստատել այն առաջարկները, որ արել է մասնագործներին եւ ազգաբնակչութեան զաշտային աշխատանքները ապահովելու համար։ 2) Փոխարքայի կառավարութեան կից հաստատել առանձին խորհրդակցութիւններ հայերին ու թուրքերին խաղաղեցնելու գործերի համար, երկու տղերքից պատգամաւորներից։ 3) Նահանգապետների եւ գաւառապետների մօտ կազմել խաղաղարար յանձնաժողովներ այնու, որ տեղական իշխանութիւնները կարող լինեն զիմել նրանց անհրաժեշտ դէպքերում հայ-թրքական յարաբերութեանց վերաբերեալ բոլոր խնդիրների համար։ Գաւառական յանձնաժողովները, գաւառի գիւղերը չլինելու, ամեն կերպ պիտի աջակցեն ամենքի համար այնքան ցանկալի խաղաղութիւնն ամրացնելուն։

Անկախ դրանից, փոխարքայի կողմից անմիջապէս կարգադրութիւններ կանւեն, որ աղմկնիւղղացիան ձեռնարկի ամենակտրուկ միջոցների թէ անկարգութիւնները վերացնելու եւ թէ նոցա ձնչելու համար խստօրէն պատմելով մեղապարտներին, այլ եւ ազգաբնակչութեանը երաշխաւորելով հաղորդակցութեանց ապահովութիւն եւ խաղաղ աշխատանքները, վերադարձնելով բնակիչներին քանդուած գիւղերը, թէ սոքա չիրենք կը ցանկանան։ Այն անձները, որոնք զէնք կուենան յանցաւոր նպատակներով, զինաթափ կանւեն. այն գիւղերը, որոնց բնակիչները մեղապարտ կը լինին խռովութիւնների մէջ, աղմկնիւղղացիան կերպով կենթարկեն տուգանքի։ Անցեալի աւերների (պղծում) միջանները յայտնի կը կացուցանեն կոմիսիաների ձեռքով, մասնակցութեամբ ազգաբնակչութիւնից ընտրուածների եւ կը հատուցանեն այն

կարգով, որը կառավարութիւնը կը գործադրի աւերների նման դէպքերի համար Ռուսիայի կենդրոն նահանգներում։ Հարկահանութեան թիւեւաւորներ այն տեղերի համար, ուր աւերներ են եղել, կը տրուին օրէնքով սահմանուած կարգով։ Գիւղական հասարակութիւնների բաժանելը չըջանների վրայ, հողի յատկացնելը անվտանգ տեղերում. կամաւոր կերպով հողաբաժինները փոխանակուի հետ միասին, կը կատարեն ազգաբնակչութեան խնդիրների համաձայն, կարելիութեան չափով։ Ինչ վերաբերում է նահանգական եւ գաւառական վարչութեան եւ ոստիկանութեան վերակազմելուն, փոխարքան ինքը զբաղւած է այդ հարցով եւ այդ վճռելու ժամանակ ուշադրութեան կառնեն խորհրդակցութեան ցանկութիւնները իսկ որպէս զի ապահով լինի որ աղմկնիւղղացիան եւ ոստիկանութիւնը ամենալաւ անձնական կազմ կը ստանան, այդ մասին ձեռնարկւած են եւ անչիւ կերպով կը ձեռնարկւեն միջոցների։ Նոյն պէս հարց կը յարցուի, որ ազգաբնակչութեանը ապահովացնել արագ արդարադատութիւն այն հիմունքներով, որ ցոյց են տրւած խորհրդակցութեանց մէջ։

Այն հարցերը որոնք մասնանի ինքնաւորութիւններում կողմից վերաբերեալ լուսաւորութեան եւ մանկականներին այլ ազգերի իրաւունքների կողմից հաստատեցնելու միջոցների մասին, որպէս կենդրոն կառավարութիւնը մշտնապէս եւ պէտք է կարծել կը լուծուին—խորհրդակցութեան համար դանկալի իմաստով։ Նաեւ փոխարքան իրանից կախուած ամեն միջոցի կը գիտի ազգաբնակչութեան մէջ գրագիտութիւն տարածելու եւ դպրոցական գործը պատշաճ բարձրութեան վրայ կանգնելու համար։ Այլ եւ անյապաղ քայլեր կանւեն պարզելու թէ ներկայ օրէնսդրութեան աղմկնիւղղացիան կարգադրութիւնների մէջ որոնք են մանկականների համար նեղիչ, այնու,

որ բոլորը, ինչ այդ նկատմամբ կախուած է Փոխարքայի իշխանութիւնից անյապաղ հարթելու։ Իսկ նրա իշխանութիւնով ոչ լուծելի խնդիրները կարելի լինէր յարուցանել սահմանուած կարգով։ Իսկ նախ եւ առաջ կը զննու տուեցական դպրանոցը ըստ անել մանկականների համար աւելի յարմար տեղում, քան Գորի քաղաքն է։ Վերջապէս, անյապաղ կազմելու է խորհրդակցութիւն փոխարքայի մօտ քօչերներին դէպի նստուկեցութիւն դարձնելուն միջոցների ընդհանուր խնդիրը քննելու համար։

Ս.ՐՇԱԼՈՅՍ

ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Մարագա քաղաքէն թղթակցութիւն մը ահ ու սարսափի մէջ կը ներկայացնէ տեղւոյն հայերը։

Մուհարէմի ամսոյն թուրք ամբարան մղկիթին մէջ գրգռուելով քանի մը չարամիտներու թելադրութիւններէն, հին գտնուող քաղաքապետի, պաշտօնաէն կը պահանջէ, թոյլատուութիւն Հայերը ջարդելու եւ կամ գործադրութիւնը հետեւեալ կէտերուն։

1) Հայ եկեղեցւոյ զանգակահարութիւնը արդիւի, որպէսզի իսլամներու նաւաղը չը խաղաղէ։

2) Քրէական յանցանքով տմբաստանուած, բայց դատարանէն անպարտ արձակուած քանի մը հայերը խիստ պատժի են թարկել։

3) 2. Նաղարէկեանի բաժնակի գործարարը փակել, եւ մեքենավար եղուարդը քաղաքէն լուծել. որովհետեւ այդ գործարարը թուրք կիներ եւ աղջիկներ կը դուրսն. մինչդեռ իսլամ կնոջ ծառայութիւնը քրիստոնեայի համար չէրաթի դէմ է։

4) Հայերը պակաս կշիռ կը գործածեն եւ կը կեղծքն եղեր խեղճ թուրքերը։

Այս պահանջներու դէմ քաղաքա-

մայր, որոտալից ամպ եւ ծանրանում ամբողջ աշխարհի վրայ։ Բայց սրանք ոչ մի գոհացում չեն տար ինչ, ոչ էլ ինչ տիրապետող մշտապէս սարսափ են մեղմացնում։

Չեմ կարող բացատրել պատերազմը, եւ հէնց դրա համար էլ պիտի խնդրեմ, ինչպէս իմ եղբայրը, եւ այլ հարեւրաւորներ որոնք այնտեղից ետ են ուղարկուում։

Չգուժ եմ միայն անդիմադրելի ցանկութիւն վազ տալու դուրս, փողոցներում, գնալ հրապարակներում եւ այլ սահման տեղ ուրմարդիկ կանեւ պոռայ։ «Ինչպիսիք պատերազմը այս րօպէին, սպա թէ ոչ...»։

Մակայն, «սպա թէ ոչ»։ Ինչ, կա՞ց մի բառ որը կարողանայ նրանց խելքի բերել. մի հնարակու, ուժեղ ազդեցիկ բառ է թէ՛, նրանց առջեւ ծնկի վաժ եւ լաց լինեմ։ Բայց հարեւր հազարներին աշխարհս լցնում իրաց լաց ու կոծով. եւ զա փոխում է մի բան։ Ինչ՞ գնամ նրանց բոլորի առջեւ սպանեմ եւ ինչ, Սպանեմ եւ ինչ՞։ Ամէն օր հազարներով են մեռնում, բայց դա փոխում է մի բան։

Եւ երբ զուգում եմ, որ անգոր եմ, ներշնչում եմ մի մղկեցին տնայնորդ տնայնորդ կուելու, պատերազմելու, որին եւ ատում եմ։ Տնայնորդ նրանց տները, բոլոր գաճերով եւ երախաներով մոխիր գաճանել, թուեաւորել նրանց խմած ջուրը։ Մեռնելները դուրս հանել գերեզմանից եւ նետել նրանց պղծ տան մէջ—անկողինների վրայ։

ՎԵՐՋ

Թարգմ. Անգլ.

ՍՏԵՓԱՆ Մ. ՄՈՅԻՍԻԱՆ

2ԻԳԱԿՈ

բողջ օրով պատուհանների վարագոյրները վար քաշուած էին մնում։ Լամբը շարունակ վառում էր եւ նա անընդհատ թէ գրում էր եւ թէ ծխում։

Ըստ երեւոյթին նա երջանիկ էր։ Ես չէի տեսած մի այդպիսի դէմք։ Նրա դէմքը մարգարէի կամ մեծ բանաստեղծի դէմքի արտայայտութիւնն ունէր։ Նա աստիճանաբար նիհարեցաւ եւ վերջոյ բոլորովին հայուեց ու թուլացաւ։ Նրա մաղերը բոլորովին ըսպիտակեցին։ Նրա անմիտ գործը ըսկուեց համեմատաբար մի երիտասարդ մարդու ձեւով, բայց նրան վերջացրեց մի Յերուկ։ Նա երբեմն շտապում էր եւ դուռն սովորականից շատ աւելի արագ, նրա գրչածայրը խրուում էր թղթին եւ կոտորաւում առանց գործածողից նկատուելու։ Ներան դպչիլ չէինք համարձակուում, այդ դէպքում նա վարակում էր լացով եւ ծիծաղով խառն մի ակամաժամով։ Երբեմն, թէեւ շատ հազուադէպ, նա երջանիկ ուրախ դէմքով գործից ձեռք էր քաշում, գուցէ մի կարճ ժամանակ հանգստանալու մտքը. ինչ է իմ անունը եւ ինչքան ժամանակէ ի վեր գրականութեամբ են զբաղում։

Նա երբէք չիչեց, ոչ պատերազմը, ոչ կինը ոչ էր երախան, այնքան լարուած ու անբաժան կերպով գրաւուել էր իրա այդ յիմար գործով։ Արթուն էլ թէ մի այլ բան ոչինչ կարելի էր ասել։ Նրա առջեւ կարելի էր խօսիլ եւ քաղել առանց նկատուելու։ Նրա կերպարանքը աւելի սարսա-

փելի էր գիշեր ժամանակ, երբ արար աշխարհ խոր քնոյ մէջ էր, իսկ նա շարունակում յիմարութեան անծայր թելը, առանց յոգնութիւն ցոյց տալու։ Միայն ես եւ իրա մայրը ընկէինք անուժ նրա մօտ մնալ այդ ժամում։

Մի անգամ փորձեցի նրա ցամաք եւ կոտորած գրչի տեղ մի մատիտ տալ մտածելով որ գուցէ նա իսկապէս մի բան էր գրում, սակայն թղթի վրայ առաջ եկան միայն ծուռ, տձեւ եւ անմիտ գծեր։

Նա մեռաւ գիշեր ժամանակ աշխատելիս։ Ես լաւ էի ճանաչում իմ եղբայրը։ Նրա խնդիրները ինչ մի դարձանք, անակնկալ բան չէր։ Ընդհակառակը ես այդ չարաչիւղ վախճանը համարում էի որպէս մի անխուսափելի հետեւանք. նրա այն խանդավառ երազներին, ակամաժամ ձգած սարսափելի անցքերին, որոնք նրա ուղեղն էին այրել. սրունգները կորցնելուն մի անչարժ եւ տաղտուկալի կեանքի մատնուելուն եւ վերջապէս նրա սպառած տանջուած ուղեղի զրոյթեան։

Հիմա որ մենակ եմ, պատերազմն է որ գրաւում է իմ ուշքը։ Նա կանգնում է իմ առջեւ որպէս մի անբացատրելի դադարեղ, մի դարձուրելի ոգի. որին չեմ իմանում ինչի նմանցնել։ Նա երեւում է որպէս մի առանց գլխի կմախք ձիւ վրայ նստած նրան նմանցում եմ նաեւ մի տձեւ շուաղի որը գառնում է մի հսկայ

պետի ներկայացուցիչը խելացի պատասխաններ կուտայ եւ կը մեկնի. բայց ամբողջը չը գտնար եւ մզկիթի տնօրէնը Աղա Մահմադ Սաւադը կեղծապէս վերջին անգամ անոր հանու-թիւնը ստանալու : Պաշտօնեան կըսէ որ ասոր եթէ բան մը պատահի հա-յերուն դուն անձամբ պատասխա-նատու ես եւ քու մորուքը կը մնայ կառավարութեան ձեռքին մէջ : Այս սպառնալիքը լսելուն պէս մզկիթի թելադրիչ տնօրէնը կեղծապէս եւ իր արքանեակները կը ցրուէ :

Հոս խօսքը թղթակցին տանք :

«Ինչ յետոյ մզկիթներէն ցրուում են ժողովականները, եւ իրանց բարկու-թեան զայրոյթը փայտի ուժգին հար-ւածներով հայոց թաղում անցած ժա-մանակ, հայերի դռները վրայ են թա-փում, ջարդոտում : Եւ ողջ հայոց թաղը ահի եւ իրկի դի մէջ ցգում :

Հետեւեալ օրը առաւօտեան, որ ա-շուրայ էր, գիշերայ լուրը կայծակի արագութեամբ անցնում է հայերի մէջ, սարսափեցնում ու մի տապալակ զրո-գրութիւն է ստեղծում Մարագի հայ հասարակութեան համար : ամէն ոք մտածում է իր ընտանիքի ու պատւի պաշտպանութեան համար : Ահա այդ րոպէներին է, որ հայը մտածում է զէնքի եւ ինքնապաշտպանութեան մա-սին :

Ամեն սիրտ զոդի մէջ էր որ մի գու-ցէ մի հանգամանք առիթ տայ թրքա-կան ջարդ առաջնալու, իսկ 15 հազար արիւնարբու գաղանների դէմ 2 հա-րիւր հայ հրաշք էլ գործելու լինի, չի կարող պրծնել :

Մօտեցաւ սպասուած ճգնաժամը : Առաւօտեան կանուխ, հետեւից մըդ-կիթներէ մէջ լսուում էր ազգական շե-փօրներից մեկամաղձաւ ձայնը, որի շուրջը հաւաքուելով Մահմէդի ժա-ռանգները մերկայացած սուրը ձեռքին բռնուելու սպիտակ պատանքի մէջ (եւս Յուսէին) էր գոռում եւ յանուն մարգարէի սուրի հարուածներով խը-փում մաքուր ամբիւր զինքին : Ա-րիւնը երեսի վրայով ոյրում թափ-ւում սպիտակ պատանքի վրայ : Ահա մահմադականների ամենաազատ եւ համարձակ ժամը, երբ ոչ մի հրամա-նի կամ իշխանութեան էլ չի եւթար-կուում : Այդ օրը, այդ ժամը բոլորը հաւատար կազմում են մի դասակարգ եւ ազատ մարգարէի սիրոյն համար :

Հետզհետէ հազարաւոր շեփօրների, թմբուկների, զոյնզոյն զրօշակների եւ ամբիւրի ազդակները միախառնուած աներգաչնակ եւ ահազողիչ ձայները լսուում էին քաղաքի այս եւ այն փո-ղոցներից եւ անկիւններից, կարծես քաղաքը պատերազմի մէջ էր եւ կար-ծես ամեն մի անգլայ կամ անչուսչ ա-ռարկայ այդ ժամին ձայն ու ազդակ արձակելու լինէր եւ ամեն շուշ ու եռանդ առած :

Եւ ահա հազարաւոր մարդ, կին, ե-րեխայ ամբողջաւոր արիւնթաթախե-րի հետ առաջ են գրոհ տալիս :

Ուր են գնում զրանք : Հարցնում է մէկը :

— Գնում են դատաւորի տունը պա-հանջելու համար բանտարկուած կալա-նաւորուածներին, այսօր օրէնք, դա-տաստան, բանտ իշխանութիւն չկայ, եւ բոլորս հաւասար ենք : Պատասխա-նում է երկրորդը :

Ինչ ժամանակից յետոյ քաղաքին բոլոր «դատանքը» կամ մարտական խմբերը, բոլորը ի միասին ժամը 9-ին հաւաքեցին դատարանի դրան առաջի մաս հրապարակի վրայ : Եւ ահա այս-տեղ սկսում է ժողովոյի եւ դատաւո-

րի մէջ պաշտօնական բանակցութիւն-ներ կատարել : Խեղճ ժողովուրդը, բոլորը գիւղացիք եւ քաղաքացիք մերկացրած սուրը ձեռքին ճօնելով օ-ղի մէջ գոչում են դատաւորին :

— Տո՛ւր մեր եղբայրներին, որոնց բանտարկել ես :

— Այս ինչը, այն ինչը տարէք, բայց այն մէկը, որ ասում էք, նա այստեղ չէ, թաւրիք է տարւած (Պարսկաստա-նում այդ օրը յայտնի գողերին եւ յան-ցաւորներին քաղաքից գիշերով հեռա-ցնում են բոլորովին հեռու գիւղերը) :

— Ոչ, սէր դատաւոր խաբուում ես մեզ, տուր մեր եղբորը, թէ չէ բանտի դու-ները կը ջարդենք : Դատաւորը առաւ-արկում է : Ահա եւ ամբողջ գրոհ է է տալիս ներս միաժամանակ, ջարդում է բանտի դռները եւ դուրս բերում է մի քանիսին, որոնց չէր յօժարում զրանց ձեռքը տալ դատաւորը :

Բանտից խլած մարդը, մտնում է դրօշակի տակ եւ սկսում է կրկին բազմաթիւ շեփօրների, թմբուկների, թմբուկների ձայները :

Դատաւորի հրապարակից հեռանա-լուց յետոյ մի խումբ 2—300 հոգի չե-ղելով իր ճանապարհը ուղւում է գրոհ տալ հայերի թաղով անցնելու (այդ խումբը Աղա Մահմադ Սաւադի խումբն էր,) բայց դատաւորի կողմից հայոց թաղում զրւած զօրքի պահակները շտապում են դրանց մօտաքը արգելե-լու : ամբողջը չի լսում զինուորների խօսքին եւ առաջ է շարժւում : Բայց պարսիկ զինուորը հէնց նոյն իսկ այդ օրը փամփուշտը վրանդիլ հրացանը գնելով գոռում է. «Թէ կը համարձա-կէ՞ք, եկէ՛ք, դատաւորը պատուիրել է որ խփենք» : Արիւնածարաւ ամբողջ յետ է նահանջում փողոցից, որն զէպի հայերի թաղն էր տանում, եւ ծուռում է թուրք փողոցները :

Այս բոլորի հանդէպ ամեն մի պարս-կահպտակ հայ երախտագիտութեամբ է տալիս այստեղ Շահ-Մուղաֆէր-էդ-դինի անունը եւ ցանկանում է իրանի հայրախնամ վեհապետին արեւշատու-թիւն :
«ԱՐՇԱԼՈՅՍ» ԵՍՀՄԲ

ՌՈՒՍԱՂԱՎԱՆ ՀԱՅԵՐՈՒ ԴԱՐՁԸ

Ալեքսանտրաբու գաւառի Բաղ-տաշէն գիւղի 20 տուն (100 հոգի) ռուսաղաւան հայերը հետեւեալ մեղայագրով կը վերադառնան Հայաստանեայց ուղղափառ եկե-ղեցւոյ մայրենի գիւղը :

1906 թ. մարտի 3-ին, մենք ի ներ-քոյ ստորին ստորագրող հայ ռուսա-ղաւան անձինքս, բնակիչք Բաղտաշէն գիւղի (Աղէքս. վիճակ), որ 1899 թ. դիմաց էինք ի ծոց ռուս եկեղեցու, անձնատուր լինելով մեր մարդկային այս կամ այն կրքին, խորթացել էինք Լուսոյ-նորան հայ-եկեղեցուց, այսօր՝ եօթն ձիգ տարիներից յետոյ՝ ազատ-ւելով խղճի խայթից, հանգստացնելու մեր հոգեկան աշխարհը, տալիս ենք այս մեղայական գիրը ներքեւ քա-հանայ Հերթեցանի միջոցով եւ պ. պ. վկաների՝ Ա. Բզնունու, Բուղդաշէնի երէցփոյ Մ. Պապիկեանի, Պ. Գեւորգ-եանի եւ Կ. Բ. Դաւաբեանի՝ յանուն Հայ եկեղեցու հոգեւոր Պետի՝ Տ. Տ. Մկրտչի Ա. Կաթողիկոսի Ամենայն հայոց, մեզ վերադառնելու ի ծոց մայր եկեղեցու :

Միեւնոյն ժամանակ երդում ենք, որ այսուհետեւ եւ ոչ մի հանգա-

մանքում, չուրանալ մայր եկեղեցին : Այս մեղայականը տալիս ենք մեր ինքնայստակ կամքով եւ ազերսանքով : Առաջին իսկ օրից մենք մեր արած քայլի համար հոգեպէս տանջու-մ ենք : Բայց որ չկար պիտական օրէնք, որով հնար ունենայինք կրկին զրդ-մամբ դիմելու ի ծոց հարազատ եկե-ղեցու, ուստի կապուած դրութեան ներքոյ սպասում էինք Աստուծոյ այ-ցելութեան : Օրհնեալ է Աստուած, որ ներշնչեց մեր Օգոստոսիան Նիկոլայ Բ Կայսեր՝ արձակել Բարձրագոյն շնորհ 17 հոկտեմբերի 1905 ամի, խղճի, կը-րօնի ազատութեան համար :

Տալով այս մեղալական գիրը Տ. Ն. քահանայ Հերթեցանին, խոնարհա-բար խնդրում ենք դիմել ուր հարկն է անելու անհրաժեշտ անօրէնութիւն, ընդունելու մեզ ի ծոց հայ եկեղեցու, որ արժանանանք ընդունելու մահն հաղորդութեան մարմնայ եւ արհան Տեառն :

Չստանանք աւելացնելու, որ մենք խնդրում ենք նաեւ մեզ հետ ընդու-նելու մայր-եկեղեցու գիրկը՝ մեր ան-չափահաս եկեղեցու պատանիներին եւ մանուկներին, որոնց կողմից մենք իրեւ ծնողներ եւ բարեբար երաշ-խաւորում ենք մեր իսկական ցանկու-թեամբ եւ խնդրանք :

ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շարժումի վերջին թիւին մէջ կը կարգւած թէ Մարտ 28 ին պիտի գու-նաւորէ Հ. Յ. Գ. Պալքանեան Շրջա-նական Ժողովը, որուն մէջ ամէն պալքանեան կօմիտէներ եւ եւթա-կօմիտէներ պիտի ունենան իրենց պատգամաւորները, իր շարքին Ռուս-ճուզն ալ ընդրած է իւր պատգա-մաւորը պարոն մը որ նկարագրի ամե-նայետներ կը ներկայացնէ եւ որ պիտի մասնակցի չրջանական ժողո-վին, պիտի յայտնէ կարծիքներ, պի-տի վճռէ խնդիրներ եւ հարց պիտի տայ ապագայ գործունէութեան մա-սին :

Այս պարոնը իւր կեանքին մէջ ե-ղած է այն ինչ որ բարոյազօրկները միայն կրնան ըլլալ : Օրինակ . 1. եղած է զոդ, 2. իրեւ դաշնակցա-կան մի ուրիշ նոյն կուսակցութեան պատկանող ընկերի ստակը իւրացը-նող ինքզինքը գործիչ ձեւացնելով : 1901 ին Հ. Յ. Դաշնակցութեան կա-րեւոր գործիչ Պ. Աշոտի սփայմաճը ընկերները գինք կը հեռացունէին տե-ղական կօմիտէն, 1904 ին կրկին գտնուելով դաշնակցութեան տեղական կօմիտէին մէջ, մենապարթիւ մի-ջոգներով եւ կուսակցութեան անու-նով յաջողութեամբ է իրեն ընկեր ունենալով կօմիտէի միւս անդամնե-րը՝ որ տեղւոյս եկեղեցական խնդ-րերը յանձնուել կառավարութեան ձեռ-քը եւ գաղթականները գրկելին ի-րենց իրաւունքէն : 1905 ին խնդրը գրուեցաւ Հ. Յ. Գ. չրջանական ժողո-վին, Շրջանական Ժողովը ալ հակա-ռակ իրեն խոստումին, մինչեւ օրս չէ կատարած իր պարտականութիւնը, տալով իր վճռագիրը, որ կրնար ծա-ռայել այս տեսակ բազմախնդիրնե-րը հեռացնելու :

Արդ գրեմ թէ չկարմրիք այդ պա-րոնը, չեն կարմրիք գինքը ընտրող-ները, արեօք պիտի կարմրին Շրջա-նական Ժողովի պատգամաւորները ձեռք երկնցնելու իրենց նոր պաշտո-նակցին որուն իրենք մասնաւոր արգէն

դատաւորները եղած են :
Ես մտադիր չէի հրապարակ գալ մինչեւ որ ընդհանուր ժողովի մէջ իմ բողոքս քննուէր, բայց վստահ ըլլա-լով որ վերոյիշեալ պարոնի քուէո-վը ընտրուած պատգամաւոր մը ինչ կրնայ ըլլալ որոշեցի չփախցունե-առիթը :

Քերթովի ԶԱԲՐԵԱՆ
18 Մարտ 1906
Ռուստուգ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի երկրագործական գըլ-խաւոր վարչութիւնը հայ լու-սաւորչական եկեղեցիներու կալ-ուածներէն 1903—1904 տարի-ներու մէջ 114,431 րուպլի ե-կամուտ ստացած ըլլալով այժմ փոխարքային կարգադրութեանը յանձնել է : Այս եկամուտները համապատասխան եկեղեցիին-րուն, վանքերուն եւ ուրիշ հոգե-ւոր հաստատութիւններու մէջ բաժնելու համար փոխարքան մասնախումբ մընտրել է :

—Վեհ. կաթողիկոսը կողդա-կով մը Տիպիսի առաջնորդին պատուիրել է առաջնորդարանի բոլոր պաշտօնեաներուն թոշա-կը աւելցնել իւրաքանչիւրին 50ական րուպլի նպաստ տալ եւ օրական միայն վեց ժամ աշխա-տութիւն սահմանել :

—Գլխավոր էն կիւմացիներ թէ Գէորգեաններու բամբակի մեծ գործարանը այրած է. հրդեհին պատճառը անյայտ է, հաւանա-կան է որ չարագործութեան ար-գիւնք լինի : Վնասը կէս միլիոն րուպլի կը հասնի. բարձրակը ա-պահովագրուած չէ եղեր :

Նոյնպէս Գանձակէն կիւմացիներ թէ թուրք գերուհիներէն մէկը մեծ գծուարութեամբ համաձայ-նեցաւ իր ամուսնոյն քով երթա-լու : մնացեալ երեք գերուհիներ-ը արտասուելով կը խնդրեն ե-ղեր որ զիրենք չը յանձնեն թուրքերուն : Վերադառնալու համար հայերու յորդորները օ-գուտ չեն բրած :

—ՇՈՒՄԻ ի հոգեւոր գարոյցի ա-շակերտները կարգ մը պահանջ-ներ ընելով դատաւորութիւնը դադարեցուցին : Բայց գարոյցի վարչութիւնը աշակերտներուն մի քանի պահանջները ընդու-նելով, խաղաղեցուց եւ դատերը վերսկսեցին :

—Տ. Գէորգ. եպիսկ. Սուրէն-եանց եւ Տ. Նահապետ եպիսկ. Նա-հապետեան, Էջմիածնի Սինօգին անդամ անուանուած եւ հաստատու-ած են : Այս երկու եկեղեցական-ները հալածուած են հին ռեժի-մէն հայ եկեղեցւոյն իրաւունք-ները քաջաբար պաշտպանելուն պատճառաւ :

—Կովկասի կառավարութիւնը սկսած է կռուող հայերու եւ կո-

զոպտող ու յարձակող թուրքերու գիւղերը խուզարկել հայերէն գէնք ու տուգանք պահանջելով, իսկ թուրքերէն գողոններ, հայտա-եաց և կաշառակեր գաւառապետ-ներ ու սպաններ յայտնի կերպով աշառութիւն կընեն, ինքնապաշտպան հայ գիւղերը կը ռմբակոծեն, իսկ թուրքերուն հետ շատ խիստ չեն վարուիր, որովհետեւ կողոպուտեն բաժին կը հանուի. բայց հայերը խստիւ կը բողոքեն այդ անիրաւութեանց դէմ:

Ի Խ Թ Ա Ր

Ս. Զատիկ միւսնաթիւթի իւն քէօլէրտէն գասապալարա էնէն ապօնէլէրիմիդին կաղէթա պօրճլարընը կէսնտէրմէլէրի րէճա օլունուր:

Տարմի սուրէթտէ գասապալարտա պուլընանլար տախի սէնէմիդին իւն չիւնճի այը խիթամ պուլմանընը միւլնաղէ իտէրէք, պարի իւք ալթը այլլը ապօնմանը կէսնտէրմէլէր պիզի մէմուսն իտէճէքլէր: Տիւնեանըն հէր թաղափրնտա կաղէթա բարասը պիւթիւն րէչին օլտըր հէրքէսէ մալիւ օլմար տըր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Թիւրք-պուլկար թիւարէթ ահտանմէսինին թէտգըգը իչիւն գօմիսիւնը մախսուսըն իքինճի մէճլիսի ապրիլ 3 տէ վուգու պուլտըղը Սթանպուլտան պիւտիւրիւմիչ տիր:

—Վիւքէլա մէճլիսինին գաւարը իւզէրէ: Մարտ 15 տէ Մախսուսինին Մէքքէ նաւ վաւորը իւն սիւրկիւն կէսնտէրտիւլէր Աֆրիգայի Օսմանիյէ գըթաւսընա՝ Ապտուլ-Րաշադ պէյ Ալի Շամիլ բաշա վէ տիկէր 30 քիչի քեաֆէսի Պէտրխան ֆամիլեասընա մէնսուպ: Վէ շէհիր էմինի Րըթվան բաշանըն ասըլ 4 գաթիւլէրի պիւլ մուհաքէմէ ճէզարի սէզալարընա չարըլաճաղար:

—Սքիւպ վիլայէթիւնին Բրիսթինա գաղաւթնտա Արնաւլուտլար թօքլանարազ՝ սիւսն էլտէ հիւքիւմէթէ հիւնուս իթմէք թէհ-տիտի իւն, սիւրկիւն օլընմըլպիւր գաչ Արնաւլուտլարըն սէրպէսթ պըրազըլմալարընը վէ հայլաւնաթ վէ նիւֆիւս վէրկիլէրինին լաղվընը թալէպ իտէյօրլար:

Միթրօվիցատա պուլընան ֆէրիգ Շէմսի բաշա իւք իշարէթտէ հաղըր օլմագ իչիւն էմիր ալտը, Շէմսի բաշայա իւչ պուչուգ թապուր եէնի աւքէր կէօնտէրիլիյօր պու թապուրլար ճաւգօլա վէ իքէքտէքի արնաւլուտ ըսեանընա գարշը կիտէնլէր տիր:

—Տրապիզոն վիլայէթիւնտէ Աղտապ եախտ Քրօմտաղ քէօլէրին էհալիսինի եէնիտէն խրիսթիան

թանըթմագ իչիւն Րուս Բաթրիգինին միւրաճաթլարը թիւրքլէր սէմէրէսիզ պըրագմագ իսթէյօրլար: Բաթրիգին էլչիլէրէ տախի միւրաճաթ իթմիչ օլմասը թիւրքլէրի գըզտըրճըլ ֆագաթ բաթրիգ իգթիլարի հալտէ թա Լահէյ գօնֆէրասընա միւրաճաթ իտէճէկի վէ պու խուսուստա հէր պիւր ֆէտաքեարլըղը կէօղիւնէ ալմըլ օլտըղը էնտ: Ռուսիան ին մուխպիւրի պիւտիւրիյօր:

—Իթալիա տէվլէթի տախի տիկէր պէօյիւկ տէվլէթլէր կիւպի թիւրքիանըն իսթէլէրինտէ բօսթախանէլէր աչմագ իտտասընտա ըմըլ, Սուլթան տիկէր էճնէպի բօսթալարընը գալտըրմագ իսթէր իքէն իթալիանըն պու իտտասընա գարշը նէ եաբաճագ պագալմ:

Ալճէղիւրա գօնֆէրանսը իւն Մարոք մէսէլէսի խիթամ պուլմասընտա իթալիա տէվլէթի թըրապօլուս մէսէլէսիւնի օրթայա գօյուպ, օրտա քէնտիսինէ պաղը իմթիաղաթ վէ հագլար էլտէ իթմէք իսթէյէճէք իմիչ:

Էվլէլէրի սէնէ ինկիլթէրա, Ֆրանսա վէ իթալիա տէվլէթլէրի պէյնինտէ Պահրը-Սէֆիտին (Միշերկրակաւն ծով) Աֆրիգա սահիլլէրինտէ պիւր թագըմաւաղիլէր վէ մէսէլէրի իչիւն քէնտիլէրինտէ իթիւրաֆ հասըլ իտէրէքիւնկիլթէրանըն Մըրըրտա, Ֆրանսանըն Մարոքտա վէ իթալիանըն թրապօլուստա վէ Հապէչիստանտա հաղլար վէ թէհսիւրլէր էլտի իթմէսինէ խօշ նազարլէ պագմայա վէ իգթիլարի հալպիւր պիւրինէ մուսվէնէթ իթմէկէ սէօզ վէրմիչլէր իտի: Շիմտի Ֆրանսա մէքըիւր իթիւրաֆտան Մարօքտա ֆայտալանտը, իթալիա տախի թրապօլուստա ֆայտալանմագ իսթէյէճէք տիր: Սուլթան Համիտ պու էսնատէ թըրապօլուսըն հիւքիւմտաղը իքէն Մարոք սուլթանը կիպի էվրոքալըլարըն վէրէճէքլէրի հիւքմի գապուլ իթմէքտէն մաստա պիւր չարէ պուլմալայաճագ:

Թ Ի Ի Ր Ք Ի Ա ՎԷ ԻՆԿԻԼԹԷՐԱ

Մըսըր սինօրընտաքի թապաա գըթասընըն Ագապա նամ գըսմընտան թիւրք աւքէրլէրին չէքիւմէլէրի իչիւն ինկիլթէրա Պապը Ալիյէ ալթը կիւն միւտտէթ վէրմիչ վէ եէտիւնճի կիւնիւ աւմէլիաթը հարպիյէ պաշլայաճաւընը իթալիա էյլէմիչ օլտըղընտան, Եըլտըղտա հէյէճան հասըլ օլարագ, տէր հալ միւնաղապա նէթիճէ վէրիլմէսինէ Սուլթան մէճլիսի վիւքէլայա էմր իթմիչ տիր: Ինկիլիզ աւքէրլէրի իւք իշարէթտէ Ագապալը իչլալ իթմէյէ հաղըրտիւրիյօրլար:

—Սուսամ աւտօընաա գարըշըգլըգ արթմագտա տըր, իչպու աւտօթօնմիւ ուսուլի իւն իտտան պէյ նամը իւն կէօնտէրիլէն մէմուրլտը էհալիւնին հիտտէթիւնիմուճիպ օլիյօրլար: Սուսամ տախի պէլէրի կիւրիտ կիպի եալուանիստան իւն պիւրլէչէք վէ եախտ Սուլթանըն միւտալիլէոինտէն պիւթիւն պիւթիւնէ աւտօ օլմագ իսթէյէճէք կէօրիւնիյօր:

Ր Ո Ւ Ս Ի Ա

Գաղանտան պիւտիւրիւտիկի իւզրէ, 1500 թաթար մէքթէպիլէր տէրլէրի թաթիլ իտուպ, մէքթէպիլէրին տախիլի իսլահաթ իսթէրլէր իմիչ:

—Գուլթալիսէ եաղըն (Կիւրճիստան) բօսթաարապալարընը թուլթուպ 1,500 ռուպլի ալմըլար:

—Թիֆլիստէն Ա. Վէսթիկի ին իշարը իւզրէ, թաթարլար Աղտամտա պիւր պէօլիւկ էրմէնիլէր իւզէրինէ հիւնուս իտէրէք, անլէրտէն չօղլարընը եաղէլմիչլէր: Խաղախլար եէթիլիչ վէ հիւնուս իտէնլէրէ գարշը ալթէլ իթմիչ տիրլէր: Թաթարլարտան 2ի էօլմիւլ վէ 5 քիչի եաղէլէնմիւլլէր:

—Գրօնշլթատա 1605 սէնէսի Յուսվար ալընտա չըգան գարըշըգլըգտան տօլայը մաղնուսն օլան 207 քիչիտէն 84 քիչի պէրաաթ իթմիչ տիր: տիկէրլէրին պիւր թագըմը պիւր սէնտէն 20 սէնէյէ գատար հապսըղլէ մահքիւմ իտիլմիչ աիկէր գըսմը քիւրէկէ կէօնտէրիլիչ տիր:

—Մօսկուտա սէնաի մէքթէպիւնին սալօնընա պիւր պօմպա ալթըմըլ վէ արգասընտան պիւր պօմպա տահա բաթլամասը իւն մէքթէպ եղըլմըլ տըր:

—Րուսիա էվրոքատան եէնի իսթիգրաղ իթմէկէ չալըշտըղընտան, Ալմանիա հիւքիւմէթի ալման պանգալարընըն եէնի ռուս իսթիգրաղտա գարըշլալարընը իսթէմէլ իմիչ:

—Մօսկուտա միւլիւր էվրագ վէ կաղէթա պասմագ իչիւն կիլլի պիւր մաթպաա պուլընմուշ տըր, իչպու մաթպաաաա պօմպալար վէ ֆիլէնկիլէր տախի պուլընմուշ:

ԱԼՄԱՆԻԱ ՎԷ ՍԵՐՊԻԱ

Իմէրաթօր Վիլհէլմ Սըրպէլչիսինէ պիւրինճի սընըֆ (Բուրուսիա թաճը) նիչանընը վէրտի էլչինին քեաթիպինէ տախի իւչիւնճի «Գըրմըղը Գարթալ» նիչանը իհտա իթտի:

Գրալ Ալէքսանտըն գաթլինտէն պէրու էճնէպի հիւքիւմտալար Սերպալարա իւք տէֆա օլարագ նիչան վէրիյօրլար:

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Է Ի Է

Ինկիլիզ Գրալը վէ գրալիցասը ապրիլ 3 տէ Մարսիլիտաա պիւրլէշուպ, «Վիկթօրիա անտ Ալպէրթ» վաբօրընա ռագիպ օլմուշլար:

—Կէչէնլէրտէ Գուրիէր մաստէն գաղասընտան սաղ չըգարըլմըլ օլան 13 քիչիտէն իքիսինէ Լէժիօն տ'Օնէօր գօրտօնը վէ օնպիւրինէ տախի ալթուս միտալիէ վէրիլմիչ տիր: գաղաղատէլէրի գուրթարմայա չալըչան Ալմանլարա տախի միւքեաֆաթ վէրիլէճէք իմիչ:

ԼԱՀԷՅ ԳՕՆՖԷՐԱՆՍԸ

Վաշինկթօն 4 Ապրիլ— Լահէյին իքինճի սուլհ գօնֆէրանսը յուլիս իպթիտասընտա պաշլամասընը Րուսիա էլչիսի Մ. Ամերիկա հիւքիւմէթիւնէ թէքլիֆ իթտի:

Թ Ի Ի Ք Մ Ա Ր Ի Յ Է

ՎԱՌՆԱ,	25 Մարտ.
ԶԱԽԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վաղըն	54-60 լիպ. 9.80/11.20
Արապա	52-62 լիպ. 9.60/11.60
ԱՐՔԱ,	
Վաղօն 100 քիւ	11. /11.20
Արապա	42-47 լիպ. 6. 60/7.20
ԵՌՈՒԱՅ արապա	33/36 լպ. 5.20/5.60
Վաղօն 100 քիւ	11.40/11.26
ՖԱՍՈՒԼԵԱ արապա	100քիւ 20—21
ՌԱԲԻՑԱ	100 Եօգ
Արապա	100 քիւ Եօգ
ՏԱՐԸ արապա	10.20/10. 60
ՔՕԼՕՁ արապա	55-60 լպ. 11./12
ՄԻՍԻՐ 57-58 լպ. առապա	7.90/8.
» 100 քիւ	10. 80/11.
ԶԱՎՏԱՐ արապա	8.40/9.
» 100 քիւ	13. /13.50
Կիւնտէ 8—10 վաղօն	վէ 30—40
արապա կէլմէքտէ	վաղօն մուսմէէսի նաբօլէօն 20 ֆր. արապա մուսմէլէսի նաբօլէօն 20. 20
ՍԱՐՐԱՅԻՅԷ	
նաբօլէօն 20, 20 ֆրանք	
Օսմ. լիբասը 22, 75 ալթուս ֆրանք	
ՊԱԳԱԼԻՅԷ	
Վարնա թեաղաթնտա պաղպալիյէ մալլէրին պու կէնքի ֆիլպթը, ալթուս ֆրանք իւն:	
ԳԱՀԷ	2.20/ 2.30
Շէֆէր նէմյէ	75
Շէֆէր քէսմէլ	սանտըգ 38.
Բիւրինճ ձէնօվա չուվալը	42.
» Ֆիլիպէ	» 36.
» Ինկիլիզ	» 29. 50
Րիզօ»	» 49.
ԿԱՁ Սանտըղը	12.
Ձէթիւն եաղը քիւ	1.—1.10
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	25
Եուսուրթա 100 աւթիթ	4. 70

ԼՈՒԾԻՆ ՏԱԿ

ՊՈՒԼԿԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՅԱՆ ԿԵԱՆԲԷ
Այս շատ գեղեցիկ հատոր մըն է թէ պարունակութեամբ եւ թէ կազմով. գինն է 5 ֆր. գիւմի « Զայն Հայրենեաց» խմբագրութեան:

Одговорникъ А. Курбетянъ
лѳп пплат а Д. Тодорѳъ и С-не—Варна